ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

էլ. փոստ press@investigative.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա»-ի
նախագահ
Արմեն Մելիքբեկյանին
ffa@ffa.am

Հարգելի՛ պարոն Մելիքբեկյան,

Ի պատասխան Ձեր՝ 2025 թվականի փետրվարի 27-ի գրության՝ հայտնում ենք, որ Armlur.am լրատվական կայքում հրապարակված «Ֆուտբոլի ֆեդերացիայում քրեական գործ է հարուցվել. ուր են տանում թելերը» վերտառությամբ հոդվածում ՀՀ քննչական կոմիտեի մեկնաբանությունը խեղաթյուրված է և ակնհայտորեն ժամանակագրային առումով չի առնչվում ՀՖՖ-ի ներկա գործունեության հետ:

Լրատվական կայքը փետրվարի 27-ին հրապարակել է «Ֆուտբոլի ֆեդերացիայում քրեական գործ է հարուցվել. ուր են տանում թելերը» վերտառությամբ հոդվածը, որում նախկինում նախաձեռնված քրեական վարույթը առանց իրավաչափ նպատակի վերագրվել է ՀՖՖ ներկա ղեկավարությանը:

Նույն օրը կապ է հաստատվել Armlur.am լրատվական կայքի լրագրողի հետ և տեղեկացվել է, որ նյութում Քննչական կոմիտեի մեկնաբանության իրենց տարբերակում հասկացվում է, թե վարույթը վերաբերվում է ՀՖՖ-ի ներկա գործունեությանը՝ այն դեպքում, երբ վարույթը որևէ կերպ չի առնչվում ներկա գործունեության հետ:

Հարգանքով՝

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի

մամուլի քարտուղար՝ **Կիմա Ավդալյան**